ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

# ՀՐԱՄԱՆ №__54__

«_18_» ____06____ 2018թ.                                                                                   ք. Երևան

## ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Անուշավան Գագիկի Հարությունյանին Գորիսի կայազորի զինվորական դատախազի պաշտոնից ազատելու և Հայկ Գագիկի Մարգարյանին նույն պաշտոնում նշանակելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ համապատասխանաբար՝ 13.06.2018թ. N 115-Ա և N 116-Ա հրամանները և այն, որ անհրաժեշտ է նրանց միջև կատարել վարույթների, փաստաթղթերի, գույքի, կնիքների ու դրոշմակնիքների հանձնում-ընդունում, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածով՝

**Հ ր ա մ ա յ ու մ  ե մ՝**

1. Կատարել՝ Ա.Հարությունյանի կողմից՝ Գորիսի կայազորի զինվորական դատախազության վարույթների, փաստաթղթերի, գույքի, կնիքների ու դրոշմակնիքների հանձնում, իսկ Հ.Մարգարյանի կողմից՝ ընդունում, որի համար ստեղծել հանձնախումբ՝ հետևյալ կազմով.

***Հանձնախմբի ղեկավար՝***

| | |
|---|---|
| Սարդարյան Արսեն - | Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազի տեղակալ |

***Հանձնախմբի անդամներ՝***

| | |
|---|---|
| Խաչատրյան Սերգեյ - | Գորիսի կայազորի զինվորական դատախազի տեղակալ |
| Մարտիրոսյան Հայկ - | Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմի ֆինանսատնտեսական վարչության պետ |

| | |
|---|---|
| Սմբատյան Ռոման - | Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմի քարտուղարության պետ |
| Խալաթյան Նաիրա - | Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմի քարտուղարության արխիվի բաժնի պետ |
| Բաղդասարյան Լևոն - | Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմի առաջին բաժնի պետ |
| Ղազարյան Հայկանուշ - | Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմի Գորիսի կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժնի պետ: |

2. Հանձնախմբի ղեկավարին՝ հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն ներկայացնել մինչև 2018 թվականի հունիսի 25-ը:

**Ա.ԴԱՎԹՅԱՆ**